ՀՏԴ 323.1
Պատմություն

Արմինե ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ, պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՁԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 1918-1920թթ.

1918թ. հռչակված Ադրբեջանի Հանրապետությունը արդյունք էր Թուրքիայի հետապնդած պանթուրքիզմի գաղափարախոսության և նրա գործադրած ջանքերի: 1918-1920թթ. Ադրբեջանի Հանրապետությունը իրենից ներկայացնում էր ազգային ինքնագիտակցությունից և հիշողությունից զուրկ մի միավորում: 1918 թ. մայիսյան հերոսամարտերում անկախ ապրելու հայ ժողովրդի անկոտրում կամքին բախվելով՝ Թուրքիան չկարողացավ իրականացնել համաթուրանական ծրագիրը, սակայն որոշեց այն ի կատար ածել նորաստեղծ Ադրբեջանի միջոցով: Պատահական չէ, որ Ադրբեջանը որդեգրեց այն նույն ծավալապաշտական, զավթողական քաղաքականությունը, ինչ որ Թուրքիան: Արցախի և մյուս հայկական հողերի նկատմամբ նվաճողական հավակնությունները հովանավորվում էին եղբայրական Թուրքիայի, իսկ այնուհետև նաև Անդրկովկասում իբրև <<խաղարար>> մուտք գործած Անգլիայի ներակայացուցչության կողմից: Մուսավաթական Ադրբեջանի զավթողական կեցվածքը փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանին: Վերջինս Արցախի և հայկական այլ տարածքների նվաճման քաղաքականությունը փորձում էր իրականացնել Խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ:

Ադրբեջանի պատմաբաններն ինչքան էլ փորձում են խեղաթյուրել պատմական փաստերը և հայկական հողերի նկատմամբ զավթողական նկրտումները քողարկել իրականում գոյություն չունեցող պատմական իրավունքներով, այդուհանդերձ չեն ժխտում Ադրբեջանի ստեղծման գործում Թուրքիայի և պանթուրքիզմի դերակատարությունը: Կեղծելով պատմական հիմնավոր փաստերը՝ Ադրբեջանի պատմաբանները միտումնավոր կերպով շրջանցում են մայր Հայաստանի հետ միավորվելու արցախահայության հրավիրած ազգային համագումարների որոշումները, համազգային պայքարը և թուրք-ադրբեջանական հրոսակների կողմից իրականացրած արյունալի դեպքերի փաստերը:

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղ, պատմագիտություն, կեղծարանում, փաստեր, զավթողական քաղաքականություն, արցախահայություն, արցախյան հիմնահարց, պանթուրքիզմ:*

А.Хачатрян

АРЦАХСКИЙ ВОПРОС В КОНТЕКСТЕ ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ ЗАХВАТНИЧЕСКОЙ ПОЛИТИКИ И ПАНТЮРКИЗМА.

Провозглашенная в 1918 году Азербайджанская Республика была результатом претворяемой Турцией идеологи пантюркизма и ее усилиям. В 1918-1920 гг. Республика Азербайджан это обьединение, лишенное национального самосознания и памяти. Столкнувшись с непреодолимой волей армянского народа к свободной жизни, проявленной в героических сражениях в мае 1918 года, Турция не смогла осуществить пантюркскую программу, но решила реализовать ее через вновь созданный Азербайджан.Неслучайно, что Азербайджан принял ту же экспансионистскую, агрессивную политику, что и Турция. Амбиции по захвату Арцаха и других армянских земель спонсировались братской Турцией, а затем пришедшим в Закавказье в качестве «Миротворца» британским представительством. Захватническое поведение Мусаватистского Азербайджана было продолжено Советским Азербайджаном. Последний пытался осуществить политику захвата Арцаха и других армянских земель при поддержке Советской России. Насколько азербайджанские историки пытаются исказить исторические факты и прикрыть захватнические претензии в отношении армянских земель в действительности не существующими историческими правами, настолько же они не отрицают роли Турции и пантюркизма в создании Азербайджана. Фальсифицируя исторически обоснованные факты, азербайджанские историки сознательно обходят решения национальных собраний, созванных армянством Арцаха, об объединении с Матерью Арменией, общенациональную борьбу и факты кровавых происшествий, осуществленных турецко-азербайджанскими бандитами.

Ключевые слова: *Нагорный Карабах, историография, фальсификация, факты, захватническая политика, армянство Арцаха , Арцахский вопрос, пантюркизм.*

A.Khachatryan

THE ARTSAKH ISSUE IN THE CONTEXT OF PAN-TURKISM IN 1918-1920. REFERENCE TO THE FALSIFICATIONS OF AZERBAIJANI HISTORIOGRAPHY.

The Republic of Azerbaijan, proclaimed in 1918, was the result of the ideology of Pan-Turkism pursued by Turkey and its efforts.

During 1918-1920 the Republic of Azerbaijan was a union devoid of national self-consciousness and memory. Facing with the unbreakable will of the Armenian people in the heroic battles during May 1918 Turkey failed to implement the pan-Turkic program, but decided to implement it through the newly created Azerbaijan. It is no coincidence that Azerbaijan has adopted the same expansionist, aggressive policy as Turkey. The claims in towards Artsakh and other Armenian territories were sponsored by fraternal Turkey, and then by the British delegation, which entered the Caucasus as a "peacemaker". The invading attitude of Musavat

Azerbaijan was transferred to Soviet Azerbaijan. The latter tried to implement the policy of conquering Artsakh and other Armenian territories with the support of Soviet Russia.
No matter how much Azerbaijani historians try to distort historical facts and cover up the invasions of Armenian lands with non-existent historical rights, they do not deny the role of Turkey and Pan-Turkism in the creation of Azerbaijan. By falsifying the well-founded historical facts, Azerbaijani historians deliberately ignore the decisions of the National Assemblies convened by the Armenians of Artsakh to unite with mother Armenia, the nationwide struggle and the facts of the bloody events carried out by the Turkish-Azerbaijani bandits.
Keywords: *Nagorno-Karabakh, historiography, falsification, facts, predatory policies, Armenians of Artsakh, Artsakh issue, pan-Turkism.*

1918թ. հայ ժողովրդի և նրա պատմական հողերի նկատմամբ թուրք-ադրբեջանական զավթողական կեցվածքն արդյունք էր թուրք-ադրբեջանական զավթողական քաղաքականության և Թուրքիայի որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսության: Վերջինս դարձավ այն հիմնաքարը, որի վրա ձևավորվեց թուրքական ագրեսիվ և ծավալապաշտական քաղաքականությունը, որը ենթադրում էր մուսուլմանական ողջ աշխարհի միավորում թուրքական դրոշի ներքո: Պանթուրքիզմի գաղափարախոսության կործանարար հետևանքը արևմտահայության ցեղասպանությունն էր 1915թ. իր իսկ պատմական հայրենիքում: Թուրքական նոր իշխանությունները՝ ի դեմս քեմալականների, որդեգրելով նախորդ ցեղասպան երիտթուրքերի քաղաքականությունը, նպատակադրվել էին բնաջնջել նաև արևելահայությանը, միավորել այսրկովկասյան մուսուլմանական զանգվածներին, ի կատար ածել վաղեմի երազանքը՝ Մեծ Թուրանի մահմեդական, թուրքական պետության ստեղծումը: 1918թ. Անդրկովկասում ստեղծված նոր իրավիճակը, անդրկովկասյան սեյմի քայքայումը հող ստեղծեցին անկախ ազգային պետությունների ստեղծման համար: 1918թ. մայիսի 28-ին հայ ժողովուրդը հռչակեց իր ազգային անկախությունը: Ստեղծվեց հանրապետություն, պետականության հարուստ փորձ ունեցող հայ ժողովրդի կողմից: Նույնը չէր կարելի ասել մայիսի 27 (այլ աղբյուրներով 28)-ին հռչակված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության ստեղծման մասին: Ա. Մանասյանը իրավացիորեն նշում է, որ Ադրբեջանի հանրապետությունն ազգային հանրապետություն չէր[1]: Կարող ենք ասել, որ 1918-20թթ. ադրբեջանական ժողովրդի և հանրապետության համար որոնումների, սեփական դիմագծի ստեղծման, ինքնահաստատման, ազգային պատկանելության կողմնորոշման, ազգային ինքնության, կրոնական ու ազգային առաջնահերթությունների տարանջատման մի ժամանակամիջոց էր: Ժողովուրդ, որը չուներ ազգային պատմության և պետականության փորձ, որը չէր գիտակցում իր ազգային պատկանելությունը, ստիպված էր նոր պայմաններում ինքնակազմակերպվելու որպես հանրապետություն: Ազգային արմատներ ու ազգային դիմագիծ չունեցող ադրբեջանական

[1] ***Балаев А.Г.***, *Азербайджанская нация, основные этапы становления на рубеже XIX-XX вв., Москва, 2012, стр. 3*

հանրապետության ստեղծումն արդյունք էր Թուրքիայի գործադրած ջանքերի: Ադրբեջանցի պատմաբան Ա. Բալաևը այդ առիթով գրել է. «Ադրբեջանական թուրքեր» տերմինը տեղին է ասել XX դարասկզբի համար»[1], մինչ այդ նման անվանումով ազգ չկա: Մեջբերելով ադրբեջանական քաղաքական գործիչ Աղաևին՝ Բալաևը գրում է, որ ,չկար ադրբեջանական հասարակություն որպես այդպիսին, այլ կար մեխանիկորեն իրար միավորված, կողք կողքի ապրող մարդկանց ամբողջություն»: Փաստորեն Ադրբեջանի ոչ ազգային հանրապետություն լինելը ստիպված են խոստովանել և ընդունել նաև ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները: Այսպես կոչված ,ադրբեջանցին» զուրկ էր ազգային ինքնագիտակցությունից: Ադրբեջանի ստեղծումը արդյունք էր XIX դարի վերջին որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսության: Զավթողական քաղաքականության ու գաղափարախոսության, այլ ոչ թե ազգային ինքնագիտակցության հասունացման հիմքերի վրա ստեղծված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը կոչված էր ավագ ողբոր՝ Թուրքիայի օրինակով տարածքային յուրացումներ կատարելու հարևանների՝ հատկապես Հայաստանի հանրապետության հաշվին: Ադրբեջանի վարած նվաճողական քաղաքականությունը հովանավորվում, խրախուսվում էր Թուրքիայի կողմից, նաև պետք է ցավով արձանագրենք, որ այն պաշտպանություն գտավ նաև 1918թ. Անգլիայի, իսկ հետո Խորհրդային Ռուսաստանի կողմից:

Ադրբեջանական պատմագիտությունը, խեղաթյուրելով պատմական հանրահայտ փաստերը, ներկայացնում է, որ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը բնիկ ադրբեջանական հողեր են և գտնվել են Ադրբեջանի հսկողության ներքո: Մինչդեռ փաստ է, որ 1918թ. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո Լեռնային Ղարաբաղն, որը պատմության տարբեր ժամանակահատվածներում էլ ունեցել է պետականության դրսևորումներ, ապրել պետական կյանքով, իր վճռական կամքն է արտահայտել և իրեն համարել մայր հայրենիքի անբաժանելի ու անքակտելի մասը: 1918թ. հուլիսի 22-28-ը Շուշիում հրավիրված արցախահայության առաջին համագումարը Արցախը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրվեց Ազգային խորհուրդ և կառավարություն՝ կոալիցիոն սկզբունքով, որը ստացավ Ղարաբաղի ժողովրդական կառավարություն անունը: 1918թ. մայիսյան հերոսամարտերը ձախողեցին համաթուրքական պետության ստեղծելու թուրքերի մտադրությունները, որոնք բախվեցին հայոց ռազմական ուժին, անկորով ոգուն ու անկախ ապրելու կամքին ու հետ շպրտվեցին: Ադրբեջանի ստեղծումով՝ թուրքերը փաստորեն շարունակեցին արևելքում իրենց հայակուլ քաղաքականությունը, փորձելով իրականություն դարձնել պանթուրքիզմի ծրագիրը: Ինչպես նշել է թուրք պատմաբան Մ. Սարայը՝ Ադրբեջանն ու ադրբեջանական թուրքերը այն կամուրջն են, որով պետք է թուրքերը միանային թուրքերի հետ: Թուրքերի նպատակն էր ամեն կերպ պաշտպանել Ադրբեջանն ու համատեղ գործունեության մեջ դրված համաթուրանական քաղաքականությունը: 1918թ. սեպտեմբերի 18-ին թուրքերը գրավեցին Բաքուն Նուրի փաշայի գլխավորությամբ: Թուրքիան, որի քաղաքական ու ռազմական դավերի

[1] *Նույն տեղում, էջ 13*

արդյունքում էր ստեղծվել Ադրբեջանը, սկզբից նեթ էլ հանդիսացել է Ադրբեջանի հովանավորն ու խնամակալը: Ադրբեջանի պատմաբան Աղամալիևի մոտ կարդում ենք. «Կարելի է ասել, որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունն իր ստեղծման պահից ի վեր, կես տարվա ընթացքում, եղել է Թուրքիայի անմիջական մանդատի՝ խնամակալության ներքո»[1]: Հեղինակը գրել է, որ Ադրբեջանի համար ամենածանր պահերին թուրքական ուժերը եղբայրական օգնություն են ցույց տվել Ադրբեջանին[2]:

Այժմ փորձենք ադրբեջանական պատմագիտության շուրթերով հիմնավորել Ադրբեջանական պետության ստեղծման, նրա որդեգրած քաղաքականության թուրքամետ, զավթողական էությունը:

Այսպես "Азербайджанская демократическая республика (1918-1920)" աշխատության մեջ հեղինակը գրում է, որ Ադրբեջանի հանրապետության ստեղծման ակունքներում կանգնած Ազգային խորհրդի նախագահ Ռասուլզադեն գրել է, որ 1918թ. մայիսի 28-ը նշանավոր տարեթիվ է թուրքական և իսլամական աշխարհում, քանի որ առաջին անգամ հիմք դրվեց հանրապետության՝ հիմնված ազգային գաղափարախոսության՝ իդեալի վրա: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Ադրբեջանը չուներ սեփական ազգային գաղափարախոսություն, իդեալ, քանի որ այն չուներ ազգային արմատներ ու դիմագիծ, հետևաբար նրա որդեգրած գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմն էր: 1918թ. հունիսի 4-ին կնքվել է պայմանագիր Օսմանյան Թուրքիայի և Ադրբեջանի միջև, որով սահմանվել էր երկու երկրների մինչև ամուր խաղաղություն և բարեկամություն: Նախատեսվում էր ընդհանուր լայն սահմանագիծ Ադրբեջանի և Թուրքիայի միջև: Բաթումի պայմանագրի 4-րդ կետով, ինչպես նշված է ադրբեջանցի հեղինակների մոտ, նախատեսված էր, որ հարկ եղած դեպքում Թուրքիան ռազմական օգնություն է ցույց տալու Ադրբեջանին: Վերջիններս նշում են նաև, որ Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին նշանակում էր Լեռնային Ղարաբաղի հայկական ուժերի վերացում և Բաքվի մաքրում օտարերկրացիներից: Ադրբեջանի կառավարության գլուխ նշանակված Ֆ. Խոյսկին 1918թ. հունիսի 23-ին ժողովրդին ուղղված կոչում, նշում է ադրբեջանցի պատմաբանը, կարևորել է Թուրքիայի օժանդակությունը Ադրբեջանին՝ ազգային կառավարություն ձևավորելու գործում: Դեպի Բաքու Նուրի փաշայի 15.000 անոց զորքի շարժը մեծ ոգևորությամբ է ընդունվել Ադրբեջանում: Ռասոլզադեն վերջինիս մուտքը Բաքու համարել է երկնքից իջած փրկչի մուտք: Հարկ է նշել, որ ադրբեջանցի պատմաբանների մոտ կարևորվում է թուրքական զորքերի մուտքն ու հովանավորությունը Ադրբեջանին, բայց, այդուհանդերձ, առկա է եղել նաև տարաձայնություն հետագա գործողություններում: Այսպես՝ Բաքվի գրավումից հետո առկա էր Թուրքիայի կողմից Ադրբեջանի ներքին գործերին չափից դուրս միջամտություն, ինչպես նաև նույնիսկ կարծիքներ Ադրբեջանը Օսմանյան Թուրքիային միացնելու: Այդ տեսանկյունից հետաքրքիր է Աղամալիևի կողմից ներկայացված երկխոսությունը Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ուսուբեկովի և թուրք զորահրամանատարի միջև: Ուսուբեկովը ասել է. «Օսմանյան զորքի մուտքը կարևոր է Ադրբեջան, բայց մենք վախենում ենք

---

[1] ***Հարությունյան Հ.,*** *Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920թթ.), էջ 26*

[2] *Азербайджанская демократическая республика (1918-1920), под редакцию Агамалиева, Б. 1988, стр. 126:*

նրանից, որ թուրքերը մեզ չղեկավարեն Ստամբուլից»[1]: Այժմ ուշադրություն հրավիրենք հետևյալ կարևոր փաստարկների վրա: Թուրքական հովանավորությամբ, օգնությամբ ստեղծվեց Ադրբեջանը, որը Թուրքիայի որդեգրած պանթուրքիստական՝ համընդհանուր թուրքական պետություն ստեղծելու ծրագիրն էր: Սակայն ձևավորված ադրբեջանական կառավարության որոշ ներկայացուցիչներ՝ Ռասուլզադեն, Ուսուբկովը, կողմ էին ազգային առանձին պետության ստեղծման գաղափարին, ի տարբերություն Թուրքիայի, որի նպատակը համաթուրքական տարածք ստեղծելն էր: Նրանք գտնում էին, որ պանթուրքիզմը սպառել է իրեն, այն ավելի շատ ուտոպիա էր: Այսպես՝ Բալաևը գրում է. Պանթուրքիզմը ենթադրում էր բարենպաստ քաղաքական պայմաններ ստեղծելու միասնական թուրքական պետություն»: Ադրբեջանցի պատմաբանը չի նսեմացնում պանթուրքիզմի դերը, նշանակությունը՝ բառացիորեն ասելով՝ «Չժխտելով ռոմանտիկ պանթուրքիզմի պատմական դերը թուրք ժողովուրդների՝ ազգային անկախ կյանքով ապրելու գործում, այնուամենայնիվ Ադրբեջանի ազգային խորհրդի նախագահ Ռասուզադեն համարում էր պանթուրքիզմը ուտոպիա, որը չուներ իր հիմքում իրական հող»[2]: Պանթուրքիզմի փոխարեն պետք է լիներ թյուրքիզմ, որը իր առջև ուներ հստակ ազգային նպատակներ: Ըստ այդմ էլ Ադրբեջանի և Թուրքիայի միջև տարաձայնությունը հենց պանթուրքիզմի չափերի ու տարածվածության մեջ էր: Ադրբեջանցի քաղաքական գործիչները, որոնք ձգտում էին ունենալու, ստեղծելու առանձին ազգային պետություն, ոչ թե հրաժարվում էին պանթուրքիզմից, այլ որդեգրում էին պանթուրքիզմը՝ տեղական ազգային արտահայտմամբ, այլ կերպ ասած՝ որդեգրում էին թուրքիզմը կամ ադրբեջանիզմը: Փաստորեն դա նույն զավթողական, ծավալապաշտական գաղափարախոսությունն էր, ինչ որ պանթուրքիզմը: Ուստի պատահական չէ, որ Ադրբեջանը տարածքային ու նվաճողական կեցվածք որդեգրեց այն հողերի նկատմամբ, որոնք սեպի պես խրված էին իր ու Թուրքիայի միջև, որոնք խոչընդոտում էին այսպես ասած թուրքական ժողովուրդների միավորումը: Թուրքիան ամեն կերպ հովանավորում, աջակցում էր Ադրբեջանին, զավթողական հավակնություններ ցուցաբերում Արևելյան Հայաստանի նկատմամբ՝ շարունակելով 1915թ. ոճրագործություններն այնտեղ: Այսպես ասած՝ թուրք-ադրբեջանական ճամբարը ձեռնամուխ էր եղել հայկական հողերի գրավմանը, հայ ժողովրդի դեմ ոտնձգությունների իրագործմանը՝ իրականում մեկ միասնական, պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, սակայն երկու առանձին պետությունների՝ Թուրքիայի ու Ադրբեջանի ջանքերով: Փաստորեն ինչքան էլ ադրբեջանական գործիչները փորձեցին հրաժարվել պանթուրքիզմից ու ստեղծել առանձին ազգային միավորում, այդուհանդերձ նրանք որդեգրեցին այդ նույն պանթուրքիզմն այլ դիմակով և հետապնդում էին նույն քաղաքական նպատակները, ինչ թուրքերը: Այլ կերպ չէր կարող լինել. Ադրբեջանի ստեղծման հիմքում պանթուրքիզմն էր:

---

[1] *Азербайджанская демократическая республика.., стр. 126*

[2] ***Балаев А.**, Мамед Эмин Расулзаде, Москва, 2009, стр. 125*

Այսպիսով՝ ընդհանրացնելով՝ նշենք, որ Ադրբեջանի ստեղծման ու հետագա կայացման գործում, կարևոր էր Թուրքիայի դերակատարությունը: Ուսուբեկովը (Ադրբեջանի արտ. գործ. նախ.) ասել է. «Քաոսը, որը տիրում էր ադրբեջանական թուրքերի մոտ և ընդհանրապես Հարավային Կովկասում, հնարավոր չի ճնշել սեփական ուժերով: Արևելքից ներ են խուժում բոլշևիկները և նման պայմաններում մեզ այլ ելք չի մնում, քան դիմել օտարերկրյա միջամտությանը և տվյալ դեպքում մենք միայն կարող ենք ուրախ լինել, որ մեզ օգնող արտաքին ուժը դա եղբայրական և ընկերական ուժն է՝ Թուրքիան[1]»:

Պանթուրքիզմի ծրագիրը քաղաքական կենսուղի դարձրած Ադրբեջանի նորաստեղծ հանրապետությունը զավթողական հավակնություններ դրսևորեց պատմական հայկական հողերի վրա: Պատմության կեղծ վերարտադրողները՝ ադրբեջանցի պատմաբանները, այդքանով հանդերձ, հայերին մեղադրում էին Մեծ Հայքի պետական սահմանները վերականգնելու ձգտման մեջ:

Սա պատմական փաստերի ոչ միայն ամենակոպիտ խախտումն էր, այլև ինքնին՝ պատմության ոտնահարում: Մյուս կողմից էլ նշենք, որ Մեծ Հայքի, այսինքն սեփական պատմական հայրենիքի վերականգնման մեջ մեզ՝ հայերիս մեղադրող թուրք-ադրբեջանական պատմաբանները խոսում են պանթուրքիզմով ստեղծվելիք ապագա Մեծ Թուրան պետության մասին, որում ներառված պիտի լինեն այլոց պատմական տարածքները: Ադրբեջանցի կեղծարար պատմաբանները իրենց աշխատություններում գրում են այն մասին, թե իբր Հայաստանի Հանրապետությունը հավակնել է Ղարաբաղին, Զանգեզուրին, որոնք ըստ վերջիններիս տնտեսական, էթնիկական առումով մեկ ամբողջություն են և Ադրբեջանի անքակտելի մասը:[2] Ըստ ադրբեջանցի հեղինակների, այդ տարածքները Ադրբեջանի Հանրապետության հռչակումից հետո ընդգրկվել են նրա կազմում: Սա բացահայտ կեղծիք է, քանի որ արցախահայությունը երբեք չի հանդուրժել Ադրբեջանի իշխանությունը, որը փորձում էր ուժի միջոցով տիրանալ պատմական Արցախին: Ինչքան էլ ադրբեջանցի հեղինակները փորձում էին անտեսել և չնշել արցախահայության կողմից Ադրբեջանի իշխանությունը չհանդուրժելու փաստը, այդուհանդերձ ստիպված էին խոստովանելու, որ, ճիշտ է, Ղարաբաղում 1918թ-ից հետո իշխանությունը պատկանել է հայերին, տեղական իշխանություններին, սակայն 1919թ. սկզբից Լեռնային Ղարաբաղում փաստացի իշխել է Սուլթանովը[3]: Դժվար չէ հակադարձել Տ. Կոչառլիի մտքերին, մանավանդ որ դրանք երբեմն հիշեցնում են պատմական փաստերի «ստիպված խոստովանություն»: Այսինքն՝ ադրբեջանցի հեղինակը խոստովանում է, որ Լեռնային Ղարաբաղը 1918թ. Ադրբեջանի հանրապետության կազմում ընդգրկված չի եղել, ինչ վերաբերվում է Խ. Սուլթանովի այնտեղ փաստացի իշխելուն, ապա նշենք, որ այդ իշխանությունը թղթի վրա էր, քանի որ արցախահայության ազգային համագումարը չի ճանաչել բռնությամբ հաստատված Սուլթանովի իշխանությունը: Բացահայտ

---

[1] *Азербайджанская демократическая республика.., стр 42*

[2] *Նույն տեղում, էջ 15*

[3] ***Кочарли Т.*** *К истории карабахского вопроса, Баку 2009,стр. 99*

կեղծիք է նաև այն, թե իբր արցախահայությունը կամավոր առանց ճնշումների 1918 օգոստոսին որոշում է կայացրել Ղարաբաղը Ադրբեջանի մաս ճանաչելու մասին: Միտումնավոր կերպով ադրբեջանցի հեղինակները շրջանցում են դեպքերի իրական ընթացքը և զարգացումը, որոնք պատճառ հանդիսացան նման որոշման ընդունման: Իսկ իրականությունն այն էր, որ դեռևս 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո արցախահայության գործադրած ջանքերը տեղական իշխանության մարմիններ ստեղծելու ուղղությամբ ամբողջացվեցին 1918թ. հուլիսի 22-28-ը արցախահայության առաջին համագումարում, որտեղ որոշվեց Արցախը հայտարարել անկախ վարչաքաղաքական միավոր և ստեղծել Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: 1918թ. մայիսյան հերոսամարտերով և Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումով Թուքիայի հետապնդած համաթուրանական ծրագիրը ի չիք դարձավ՝ բախվելով անկախ պետականության ստեղծման ուղին բռնած հայության անկոտրում կամքին: Այդուհանդերձ Թուրքիան երբեք չհրաժարվեց իր հետապնդած գաղափարախոսությունից և այժմ փորձում էր այն իրականացնել՝ Ադրբեջան պետությունը որպես իրողություն ստեղծելով, նույն պանթուրքիզմի ռազմավարության մեջ նրան ընդգրկելով, այլ կերպ ասած՝ նրա ձեռքերով: Ղարաբաղի գրավման գործն իր ձեռքը վերցրած Ջամիլ Ջահիդ բեյը վերջնագիր ներկայացրեց հայությանը՝ ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Սակայն արցախահայության 2-րդ համագումարը անառարկելիորեն մերժեց թուրք զորահրամանատարի պահանջը և միաձայն արտահայտվեց Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու օգտին, որից հետո Բաքուն գրաված և Ադրբեջանի դիրքերն ամրապնդած թուրքական զորքերը՝ Նուրի փաշայի գլխավորությամբ, սեպտեմբերի 22-ին ներխուժեցին Ղարաբաղ՝ ասպատակելով Խաչենի ու Վարանդայի գավառի մի շարք գյուղեր, ինչպես նաև Շուշին: Արցախահայությունը հերոսաբար ոտքի կանգնեց հայրենի հողը թուրք-թաթարական հրոսակներից պաշտպանելու համար: 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Թուրքիան զորքերը հետ քաշեց Անդրկովկասից, որի արդյունքում մաքրվեց նաև Ղարաբաղը: Անդրկովկասում թուրք- գերմանական նվաճողներին փոխարինելու եկան անգլիացիները: Անգլիական ներկայացուցչությունը սկզբում արադարացիորեն հրաժարվում էր ճանաչելուց և ընդունելուց Ադրբեջանի կառավարությանը: Գեներալ Թոմսոնը այսպես է արտահայտվել. «Չկա համազգային ընտրությամբ ստեղծված կառավարություն, կա միայն թուրքական ինտրիգների արդյունքում ստեղծված պետություն»:[1] Ցավոք, հետագայում, շլացած ադրբեջանական նավթի հոտիցմ Անգլիան փոխեց իր դիրքորոշումը Ադրբեջանի նկատմամբ և սկսեց սատարել ու հովանավորել

[1] ***Балаев А***. *Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998,стр. 33.*

վերջինիս զավթողական կեցվածքը: Մուսավաթական Ադրբեջանն Անգլիայի լուռ համաձայնությամբ մեծ թվով զորք կուտակեց Ղարաբաղում և տարբեր ուղղություններով հարձակում սկսեց: Թուրք-թաթարական հրոսակախմբերը սարսափելի վայրագություններ կատարեցին Դիզակի ու Վարանդայի գավառներում, Շուշիում, Ասկերանում: 1919թ. հունվարի 15-ին ադրբեջանական կառավարության որոշմամբ Խոսրով բեկ Սուլթանովը նշանակվեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ:[1] Շուշիի անգլիական ներկայացուցչությունը՝ հանձին Մանկ Միզոնի, պահանջում է Ղարաբաղի հայոց ազգային խորհրդից ճանաչել Սուլթանովի իշխանությունը, սակայն ազգային խորհուրդը ստանում է հստակ պատասխան. Հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, քանի որ կախումը Ադրբեջանից համարում է անընդունելի, ինչ ձևով էլ որ այն արտահայտված լինի: Բողոքի նոտա հղեց նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որակելով Սութանովի նշանակումը ապօրինի քայլ և Ղարաբաղը համարելով հայաստանի անբաժան մասը: 1919թ. փետրվարի 10-21ը Շուշիում գումարվեց արցախահայության 4-րդ համագումարը, որտեղ որոշվեց. «Չճանաչել Ադրբեջանի իշխանությունը հայկական Ղարաբաղի սահմաններում: Անգլիա- Ադրբեջան- Թուրքիա եռյակը, ճնշումներ, արյունահեղություններ իրականացնելով Արցախում, ի վիճակի չեղավ կոտրելու արցախահայության միահամուռ կամքը և ճանաչել տալու Ադրբեջանի ատելի իշխանությունը: 1919թ. ապրիլի 23-29-ը կայացած արցախահայության 5-րդ համագումարը, որին մասնակցում էր նաև անգլիական ներկայացուցիչ Շատելվորդը, որոշում է չընդունել, որևէ մի որոշում, որն առնչություն կարող էր ունենալ Ադրբեջանի հետ: Սութանովը որոշեց սովի ճիրաններում խեղդել արցախահայությանը: Փակվեցին կենսական նշանակության ճանապարհները, տեղակայվեցին մեծ թվով ուժեր. Միայն Շուշիում 1500 զինվորներից բաղկացած ադրբեջանական զորախումբ, 3000 անոց քրդական բանդա»[2]: Ադրբեջանական հրոսակները հունիսի սկզբներին սոսկալի կոտորածներ կազմակերպեցին Շուշիում, Ղայբալիշենում և այլուր: Չնայած սարսափելի արյունահեղություններին, սովին, արցախահայության 5-րդ և 6-րդ համագումարները կրկին արտահայտեցին արցախահայության անկոտրում կամքը երբեք չճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Ադրբեջանը սաստկացրեց ճնշումները արցախահայության վրա: Արցախի տեղական իշխանությունները ձգտում էին հասնելու նրան, որ Ադրբեջանից համաձայնություն կորզեին հարցը բացառապես խաղաղ միջոցներով լուծելու մինչև Փարիզի խորհրդաժողովի հրավիրումը: Շարունակվող սովի, շրջափակման, համատարած հարձակումների և

---

[1] ***Աբրահամյան Հ.***, *Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923, Երևան, 2003, էջ 125:*

[2] ***Հարությունյան Հ.,*** *Շուշին արցախյան գոյապայքարում 1918-1920թթ., էջ 26:*

արյունահեղությունների պայմաններում Արցախում իրավիճակն ավելի օրհասական էր դառնում: 1919թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության 7-րդ համագումարը: Սուլթանովը հրամայեց թնդանոթներ տեղադրել Շոշու և Շուշիի հայկական թաղամասերի ուղղությամբ: Ի վերջո Արցախի համար ներքին ու արտաքին հանգամանքները խիստ աննպաստ համարելով և նոր արյունահեղությունից խուսափելու նպատակով՝ համագումարը որոշեց ժամանակավորապես համաձայնության գալ և ընդունել որոշում, ըստ որի՝ Արցախի լեռնային մասը՝ Շուշիի, Ջինանշիրի և Ջեբրայիլի գավառները ճանաչել Ադրբեջանի հանրապետության սահմաններում մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի գումարումը: 1920թ. փետրվարի 28-ին ացախահայության 8-րդ համագումարը, կրկին արտահայտելով արցախահայության կամքը, մերժում է Սուլթանովի պահանջը և կրկին բարձրաձայնում Հայաստանի հետ վերամիավորվելու հարցը: Մղձավանջային էր 1920թ. գարունը արցախահայության համար: Ադրբեջանը գիտակցեց, որ համոզելով, սպառնալիքներով չէր կարող լուծել Արցախի հարցը և որոշեց այն լուծել արցախահայությանը բնաջնջելու միջոցով: Արցախում կենտրոնացվեց շուրջ 10 հազարանոց զորք, որը լայնածավալ հարձակում ձեռնարկեց Ղարաբաղ-Զանգեզուրի վրա: Արցախահայության 9-րդ համագումարը 1920թ. ապրիլի 25-ին մեկ անգամ ևս արձանագրեց՝ հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, իրավիճակը փոխվեց տարածաշրջանում: Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիան կարմիր հեղափոխությունը տարածելու խոստումով իր համար ապահովել էր Խորհրդային Ռուսաստանի անվերապահ աջակցությունը: Ոգեշնչված բոլշևիկների համաձայնությամբ և թիկունքում զգալով Թուրքիայի հովանավորությունը՝ Ադրբեջանի խորհրդային իշխանությունը շարունակեց հայկական պատմական տարածքների նվաճման պանթուրքիստական քաղաքականությունը: Թուրք-բոլշևիկյան դաշինքի արդյունքը պետք է լիներ աշխարհամարտում պարտված Թուրքիայի վերականգնումը, իսկ Խորհրդային Ռուսաստանը որպես փոխհատուցում պետք է ստանար տարածաշրջանի խորհրդայնացման փաստը: Քեմալաբոլշևիկյան մերձեցման արդյունքը եղավ Հայաստանի Հանրապետության անկումը և հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Ադրբեջանին: 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով հայկական Նախիջևանի վրա հաստատվեց Ադրբեջանի պրոտեկտորատը, իսկ հուլիսի 5-ի Կովբյուրոյի անօրինական որոշմամբ Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Ոտնահարվեցին արցախահայության միասնական կամքն արտահայտած ազգային համագումարների որոշումները, տարածքի հայ ազգաբնակչության լեզվական, մշակութային, տնտեսական ընդհանրությունները պատմական Հայաստանի հետ և առաջ քաշվեց

Ադրբեջանի հետ Ղարաբաղի ինչ որ մտացածին տնտեսական ընդհանրության մասին դրույթը: Փաստորեն արցախահայության ազգային շահը ստորադասվեց Թուրքիա-Ադրբեջան-Խորհրդային Ռուսաստան եռակողմ քաղաքական շահին, և Արցախը, որը միշտ էլ կազմել է Հայաստան աշխարհի անքակտելի մասը, նրա մշակութային, քաղաքական տնտեսական դաշտի մի օղակը, ամենից անբարենպաստ պայմաններում իսկ պահպանել հայոց պետականության բեկորները, ապօրինաբար բռնակցվեց ազգային ինքնություն և դիմագիծ չունեցող Ադրբեջանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Азербайджанская демократическая республика (1918-1920), под редакцию Агамалиева, Баку, 1988
2. Балаев А.Г., Азербайджанская нация, основные этапы становления на рубеже XIX-XX вв., Москва, 2012
3. Балаев А.Г., Мамед Эмин Расулзаде 1884-1955, Москва, 2009
4. Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998
5. Кочарли Т., К истории карабахского вопроса, Баку 2009
6. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923, Երևան, 2003, էջ 125:
7. Հարությունյան Հ., Շուշին արցախյան գոյապայքարում 1918-1920թթ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը: